# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
# «ՍՄԿԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/41 » ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

ք. Կապան 22 հուլիս 2026թ
ժամը 15:00

Մասնակցում էին
հանձնաժողովի նախագահ՝
Սևակ Նավասարդյան - «Կապանի ԲԿ»ՓԲԸ տնտես.գծով տեղակալ
հանձնաժողովի անդամներ՝
Սիրանուշ Գևորգյան - «Կապանի ԲԿ»ՓԲԸ գլխավոր բուժքույր
Լարիսա Հովհաննիսյան - «Կապանի ԲԿ»ՓԲԸ հաշվապահ
Գայանե Առաքելյան - «Կապանի ԲԿ»ՓԲԸ տնտես.քույր
հանձնաժողովի քարտուղար՝ Սահականուշ Գրիգորյան- գնումների համակարգող

1. Մրցույթը կազմակերպվել է www.eauction.armeps.am կայքի միջոցով, հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 2026թ. հուլիսի 21-ին ժամը 12:30-ին:

2. Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը հրավիրվել է գնահատող հանձնաժողովի նիստ:

3. «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված **ՍՄԿԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/41** ծածկագրով էլետրոնային աճուրդին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | ՀՎՀՀ | Հասցե | Էլ. փոստի հասցե |
|---|---|---|---|---|
| 1 | «ԼԱԳԱ 1820» ՍՊԸ | 03590908 | գ. Արամուս, Երիտասարդական 2փ. 43տ. | laga1820llc@gmail.com |
| 2 | «ՖԵՆԻՔՍ ՕՆ» ՍՊԸ | 05569077 | ք.Գյումրի, Անկախության Հրապարակ, Շ 9Ա | feniixon@gmail.com |
| 3 | «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ | 00927169 | ՀՀ ք.Երևան, Վարդանանց փակուղի 8 | info@compgarant.am |
| 4 | Սիմոնյան Արարատ Անդրանիկի Ա/Ձ | 20082009 | Գեղարքունիքի մարզ, Վ. Գետաշեն Ա թղմ. 1 Փ. Տ.76 | usetechnolog@gmail.com |
| 5 | «ՆԵՔՍԱ» ՍՊԸ | 02931637 | ՀՀ, քաղաք Երևան, Գրիգոր Լուսավորիչ 7 | yerevan332@gmail.com |

**4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության, սահմանված պայմաններին համապատասխանության մասին**

Հանձնաժողովի կողմից գնահատվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ԼԱԳԱ 1820»ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, որում առկա են բոլոր փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին, բացառությամբ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում է ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մակնիշի և արտադրողի անվանումների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև տեխնիկական բնութագրերը հստակ

նշված չեն, անհրաժեշտ է ներկայացնել առանց «ոչ պակաս», «առնվազն», «նվազագույնը» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունների:

**5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

| Չափաբաժնի համար | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| Չափաբաժին 1՝ դյուրակիր համակարգիչներ | | | | | | | | | | |
| **1** | **1** | **«ԼԱԳԱ 1820» ՍՊԸ** | **1250000** | **1041558** | **20%** | **1249869.6** | **956250** | **20%** | **1147500** | |
| 1 | 2 | «ՖԵՆԻՔՍ ՕՆ» ՍՊԸ | 1250000 | 1041111 | 20% | 1249333.2 | 967000 | 20% | 1160400 | |
| 1 | 3 | «ԿՈՄՊԳԱՐԱՆ Տ» ՍՊԸ | 1250000 | 1200000 | 20% | 1440000 | 1000000 | 20% | 1200000 | |
| 1 | 4 | Սիմոնյան Արարատ Անդրանիկի Ա/Ձ | 1250000 | 1041400 | 20% | 1249680 | 1041400 | 20% | 1249680 | |
| 1 | 5 | «ՆԵՔՍԱ» ՍՊԸ | 1250000 | 2500000000 | 20% | 3000000000 | 2500000000 | 20% | 3000000000 | Մերժված |

6. Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

7. Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտ
ուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից:

8. «ԼԱԳԱ 1820» ՍՊԸ-ին հայտնաբերված անհամապատասխանությունների շտկման հնարավորություն տալու նպատակով, **գնահատող հանձնաժողովը որոշեց** հայտերի բացման և գնահատման նիստը կասեցնել 1 (մեկ) աշխատանքային օրով և այդ մասին համակարգի միջոցով ծանուցել մասնակիցներին՝ շտկելու անճշտությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

**Հայտերի բացման և գնահատման նիստը շարունակվել է 2026թ-ի հուլիսի 24-ին ժամը 10:00-ին ք. Կապան, Մ. Ստեփանյան 13 հասցեում , որին մասնակցում էին՝**
հանձնաժողովի նախագահ՝
Սևակ Նավասարդյան - «Կապանի ԲԿ»ՓԲԸ տնտես.գծով տեղակալ
հանձնաժողովի անդամներ՝
Սիրանուշ Գևորգյան - «Կապանի ԲԿ»ՓԲԸ գլխավոր բուժքույր
Լարիսա Հովհաննիսյան - «Կապանի ԲԿ»ՓԲԸ հաշվապահ
Գայանե Առաքելյան - «Կապանի ԲԿ»ՓԲԸ տնտես.քույր
հանձնաժողովի քարտուղար՝ Սահականուշ Գրիգորյան- գնումների համակարգող

9. «ԼԱԳԱ 1820» ՍՊԸ -ն սահմանված ժամկետում համակարգի միջոցով ներկայացրել է պահանջված շտկված տեղեկատվությունը:

10. Գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ԼԱԳԱ 1820» ՍՊԸ -ի ներկայացրած հայտը, որում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին և գնահատվել է **«բավարար»**:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

11. Մյուս մասնակիցների հայտերը մերժվել են:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:*

12. Հանձնաժողովը որոշեց ՍՄԿԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/41 ծածկագրով մրցույթի հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել .

| հ/հ | Մասնակցի անվանումը | Չափաբաժնի համարը |
|---|---|---|
| 1 | «ԼԱԳԱ 1820» ՍՊԸ | № 1 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:*

13. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր և անգործության ժամկետը լրանալուց հետո ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:*

Հանձնաժողովի նախագահ՝ ------------------- Սևակ Նավասարդյան

Հանձնաժողովի անդամներ՝ ------------------- Սիրանուշ Գևորգյան

------------------- Լարիսա Հովհաննիսյան

------------------- Գայանե Առաքելյան

հանձնաժողովի քարտուղար՝ ------------------- Սահականուշ Գրիգորյան